## ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՑՈՒՑԱԿ

**Միկրոծրագրի վայրը** Գեղարքունիքի մարզ, Վարդաձոր համայնք
**Միկրոծրագրի անվանումը** Վարդաձորի մանկապարտեզի կառուցում
**Միկրոծրագիր** TGQ – 09

Արդյո՞ք բնապահպանական և սոցիալական կառավարման պլանը /ԲՍԿՊ/ մշակվել է՝

**Այո +   Ոչ -**

Արդյո՞ք ԲՍԿՊ տրամադրել ՝ հնարավոր ազդեցությունների ամբողջական ցուցակը և հաստատել համապատասխան միջոցներ դրանց մեղմացման համար

**Այո +   Ոչ -**

**Վերջնական բնապահպանական գնահատման եզրակացությունը**

| **Եզրակացություն** | |
|---|---|
| Միկրոծրագիրը մերժել | Միկրոծրագիրը հաստատված է: Բնապահպանական գնահատումը ավարտված է: |
| | + |

## ԲԱԺԻՆ Ա : ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԾՐԱԳԻՐ ԵՎ ՏԵՂԱՆՔԻ ՄԱՍԻՆ

| ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ | | | |
|---|---|---|---|
| *Երկիր* | Հայաստանի Հանրապետություն | | |
| *Ծրագրի անվանումը* | TGQ-09 Վարդաձորի մանկապարտեզի կառուցում | | |
| *Ծրագրի աշխատանքների նկարագիր* | Համայնքում մանկապարտեզ չկա: Համայնքը խնդրել է կառուցել մանկապարտեզ 3 խմբի համար: Համայնքում կա մանկապարտեզի տարիքի 124 երեխա:<br><br>Միկրոծրագրի շրջանակներում նախատեսվում է կառուցել երկհարկանի կառույց համայնքի կենտրոնական մասում՝ համայնքի մշակութային կենտրոնի հարևանությամբ: Շենքի ընդհանուր մակերեսը նախատեսվում է 680 մետր քառակուսի: Համայնքը ապահովված է գազով: Ջեռուցման համակարգը և տաք ջուրը նախատեսվում է իրականացնել գազի կաթսաներով: Նոր մանկապարտեզը նախատեսվում է իրականացնել ե.բ. կարկասային, երկհարկանի, միաձույլ ծածկի սալերով և լանջավոր տանիքով:<br><br>Վարդաձորի համայքի ավագանու թ.5 առ 21.03.2011թ. որոշմամբ Մշակույթի տան կից հողատարածքից 0.217 հա հատկացվել է մանկապարտեզի նոր շենքի կառուցման համար: Տարածքը ցանկապատված չէ:<br><br>Արտաքին ցանցերը շատ մոտ են առաջարկվող տարածքին: Արտաքին գազատար կկառուցվի համայնքային ցանցին միանալու համար, որը տարածքից մոտ 30 մետր հեռավորության վրա է գտնվում: Հիմնական ջրատարը մոտ 20 մետր հեռավորության վրա է, և կկառուցվի ջրատար հիմնական ցանցին միացման համար: Հիմնական էլեկտրականության ցանցը գտնվում է 10 մետր հեռավորության վրա և կներդրվի հոսանքագիծ: Կոյուղու գիծը նախատեսվում է միացնել ամբուլատորիայի գործող կոյուղու հորին: Շինարարությունից հետո մանկապարտեզը կունենա 3 խումբ: | | |
| *Ինստիտուցիոնալ համաձայնագրեր (ՀԲ)* | Ծրագրի ղեկավար Երկին Մամադալին | Երաշխիքների մասնագետ՝<br>Դարեջան Կապանաձե, բնապահպանական<br>Սոֆիա Գեորգիևա, սոցիալական | Շահառու է հանդիսանում համայնքի ամբողջ բնակչությունը |
| *Իրականացման համաձայնագրեր (ՀՀ)* | Իրականացնող կազմակերպություն՝ ՀՏԶՀ | Տեխնիկական վերահսկիչը կընտրվի մրցույթով արտոնագրված վերահսկող ընկերությունից | Կապալառուն կընտրվի մրցույթով արտոնագրված ընկերությունից |
| ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ | | | |
| *Վերականգնվող տարածքի սեփականատեր կազմակերպության անվանումը* | Վարդաձոր համայնք | | |
| *Վերանորոգվող/կառուցվող կառույցի հասցեն և գտնվելու վայրը* | Հասցե: Գեղարքունիքի մարզ, Վարդաձոր համայնք, փողոց 19 | | |
| *Հողի սեփականատերը*<br>*Ո՞վ է օգտագործում այդ հողը (ֆորմալ/ոչ ֆորմալ)* | Հողը հանդիսանում է համայնքային սեփականություն: Համաձայն հողահատկացման որոշման (21 մարտի, 2011թ, N5) կատարվել է հողի հատկացում շենքի և խաղահրապարակի համար: Ընդհանուր մակերեսը | | |

| | |
|---|---|
| | կազմում է 2170 քառակուսի մետր է: Հողի սեփականության կադաստրային վկայականը առկա է, համարը՝ 05-084-031-014, համաձայն որի հողը համայնքային սեփականություն է: Շինարարության նախագծի համար նախատեսված հողամասի չափերը համընկնում են կադաստրային տվյալների հետ: |
| *Տվյալ ծրագրի վայրի շրջապատող ֆիզիկական և բնական միջավայրի նկարագրությունը* | Մանկապարտեզի շենքը գտնվում է համայնքի կենտրոնական մասում: Ներկայում հողամասը չի օգտագործվում է որևէ ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից. չկան կառույցներ, մշակաբույսեր, ծառեր կամ բիզնես գործունեություն առաջարկվող տարածքում: Տարածքում առկա են երկու էլեկտրասյուներ, որոնք կտեղափոխվեն շինհրապարակից դուրս: Տեղափոխությունը իրականացվելու է համայնքի կողմից ՀԷՑ-ի աջակցությամբ: Շինարարության տարածքը հարում է համայնքային ճանապարհին: Քանի որ շինարարության համար նախատեսված տարածքը լայն չէ, կիրականացվեն հետիոտնային անվտանգության բարձրացման միջոցառումներ: Տարածքը ցանկապատված չէ: Համայնքի մշակութային կենտրոնը ևս տեղակայված է այդ տարածքում: |
| **ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ** | |
| Ազգային և տեղական օրենսդրություն և թույլտվություններ, որոնք պահանջվում են ծրագրում | Այս նոր մանկապարտեզի կառուցումը ենթակա չէ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եզրակացությանը և բնապահպանական փորձագիտական եզրակացությանը՝<br><br>Համաձայն ՀՀ օրենսդրության ծրագրի իրականացման համար պահանջվում են հետևյալ թույլտվությունները՝<br>• Շինարարական աղբի թույլտվություն,<br>• Սանիտարական ինսպեկցիայի թույլտվություն<br>• Տեխնիկական պայմաններ (էլեկտրական սնուցում, գազ, ջուր,կոյուղի),<br>• Շահագործման և պահպանման պարտավորագիր<br><br>Շենքի շահագործումը պահանջում է հավելյալ թույլտվություններ, որոնք կվկայեն, որ էլեկտրականության, գազի, ջրամատակարարման և կոյուղու համակարգի տեխնիկական պարամետրերը ապահովված են: |
| **ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ** | |
| Երբ / որտեղ տեղի կունանա/տեղի է ունեցել Հանրային խորհրդատվությունը | Հասարակական խորհրդատվություն իրականացվել է Վարդաձոր համայնքում ս/թ մայիսի 10-ին: |
| **ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ** | |
| Հավելված 1. Քարտեզ և լուսանկարները<br>Հավելված 2. Բնապահպանական եւ սոցիալական հանրային լսումների արձանագրություն<br>Հավելված 3. Շինարարական թույլտվության պատճեն (կտրամադրվի)<br>Հավելված 4. Թափոնների հեռացման թույլտվության պատճեն<br>Հավելված 5. Հողի սեփականության վկայականը/ավագանու որոշման պատճենը | |

## ԲԱԺԻՆ Բ: ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

| **Շրջակա միջավայրի/սոցիալական ստուգումներ** | | | |
|---|---|---|---|
| Արդյոք աշխատանքները կներառի/ կընդգրկի նշվածներից որեւէ մեկը | **Գործունեություն/հիմնահարց** | **Կարգավիճակ** | **Խթանային գործողություններ** |
| | Ա. Շենքի վերականգնում | [ ] Այո [- ] Ոչ | Տես ստորեւ Բաժին Ա-ն |
| | Բ. Նոր շինարարարություն | [+] Այո [ ] Ոչ | Տես ստորեւ Բաժին Ա-ն |
| | Գ. Կեղտաջրերի հեռացման առանձին համակարգ | [ ] Այո [-] Ոչ | Տես ստորեւ Բաժին Բ-ն |
| | Դ. Պատմական շենքեր եւ շրջաններ | [ ] Այո [-] Ոչ | Տես ստորեւ Բաժին Գ-ն |
| | Ե. Հողի ձեռքբերում | [ ] Այո [-] Ոչ | Տես ստորեւ Բաժին Դ-ն |
| | Զ. Վտանգավոր կամ թունավոր նյութեր | [ ] Այո [- ] Ոչ | Տես ստորեւ Բաժին Ե-ն |
| | Է. Ազդեցությունը անտառների եւ/կամ պաշտպանված տարածքների վրա | [ ] Այո [-] Ոչ | Տես ստորեւ Բաժին Զ-ն |
| | Ը. Բժշկական թափոնների կարգավորում/կառավարում | [ ] Այո [-] Ոչ | Տես ստորեւ Բաժին Է-ն |
| | Թ. Երթեւեկության եւ հետիոտնային անվտանգություն | [+] Այո [ ] Ոչ | Տես ստորեւ Բաժին Ը-ն |

## ԲԱԺԻՆ Գ: ՄԵՂՄԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

| **Գործունեություն** | **Պարամետր** | **Նվազեցման միջոցառումներ** (ներկայացնել ծախսեր, ուր կիրառելի է) |
|---|---|---|
| **0**. Ընդհանուր պայմաններ | Ծանուցում եւ աշխատողների անվտանգություն | ➢ Շինարարական եւ շրջակա միջավայրի տեղական տեսչություններին տեղեկացվել է առաջիկա աշխատանքների մասին:<br>➢ Հանրությանը համապատասխանաբար տեղեկացվել է աշխատանքների վերաբերյալ (այդ թվում՝ տեղանքի աշխատանքների վերաբերյալ):<br>➢ Ձեռք են բերվել իրավաբանական բոլոր թույլտվությունները շինարարության եւ/կամ վերականգնման համար<br>➢ Կապալառուն պաշտոնապես համաձայն է, որ ողջ աշխատանքն իրականացվի ապահով եւ սահմանված կարգով, նվազեցնելով ազդեցությունները հարեւան բնակավայրերի եւ միջավայրի վրա:<br>➢ Աշխատակիցները պետք է համապատասխանեն միջազգային լավ փորձին (մշտապես սաղավարտներով, անհրաժեշտ դիմակներով եւ անվտանգության ակնոցներով, ամրագոտիներով եւ ապահով երկարաճիտ կոշիկներով):<br>➢ Տեղանքների համապատասխան ցուցասյուները պետք է տեղեկացնեն աշխատողներին հետեւել հիմնական կանոններին: |
| **Ա**. Ընդհանուր շիրարարական պայմաններ | Օդի որակ | ➢ Շինարարական աղբը պետք է պահվի վերահսկվող գոտում եւ ցողվի ջրով՝ շինարարական փոշին նվազեցնելու համար:<br>➢ Շրջակա միջավայրը (մայթեր, ճանապարհներ) պետք է ազատվեն շինարարական աղբից՝ փոշին նվազեցնելու համար:<br>➢ Տեղանքում բաց վիճակում չպետք է այրել շինարարական թափոններ:<br>➢ Տեղանքներում չպետք է լինի չափից դուրս շատ չօգտագործվող շինարարական փոխադրամիջոցներ: |
| | Աղմուկ | ➢ Շինարարության աղմուկը պետք է սահմանափակվի թույլատրելի սահմաններում:<br>➢ Աշխատանքների ընթացքում գեներատորների շարժիչները, օդային կոմպրեսորները եւ մյուս մեխանիկական սարքավորումները պետք է փակվեն, իսկ սարքավորումը պետք է տեղադրվի բնակելի վայրերից հնարավորինս հեռու: |
| | Ջրի որակ | ➢ Տեղանքում պետք է իրականացվեն էռոզիայի եւ նստվածքի վերահսկման միջոցառումներ, ինչպես օրինակ՝ խոտի պատնեշներ և/կամ տիղմային ցանկապատեր, որոնք կկանխեն նստվածքների արտահոսքը շինհրապարակից, որը կարող է ավելորդ պղտորվածություն առաջացնել |

| | | |
|---|---|---|
| | | մոտակա գետերում ու առվակներում |
| | Թափոնների կառավարում | ➢ Քանդման ու շինարարական աշխատանքների արդյունքում ակնկալվող բոլոր հիմնական տեսակների աղբի/թափոնների հավաքման ու հեռացման ուղիներն ու տեղերը պետք է սահմանված լինեն<br>➢ Հանքային ծագման շինարարական աղբը և քանդման թափոնները պետք է տեղում առանձնացվեն ընդհանուր թափոններից, օրգանական, հեղուկ կամ քիմիական թափոններից և պահվեն համապատասխան տարաներում<br>➢ Շինարարական աղբի հավաքումն ու հեռացումը կապահովվի համապատասխան լիցենզիա ունեցող աղբահանություն իրականացնողի կողմից<br>➢ Աղբահանության մասին գրառումներ պետք է վարվեն՝ որպես այն սահմանված կարգով կազմակերպելու ու իրականացնելու ապացույց<br>➢ Նպատակահարմար ու հիմնավորված լինելու պարագայում կապալառուն կարող է վերաօգտագործել կամ մշակել համապատասխան պիտանի նյութերը (բացի ասբեսթից) |
| Բ. Կեղտաջրերի մաքրման անհատական համակարգ | Ջրի որակ | ➢ Շինհրապարակից (կառուցում կամ վերակառուցում) սանիտարական թափոնների ու կեղտաջրերի հեռացման վերաբերյալ մոտեցումը պետք է հաստատվի տեղական իշխանությունների կողմից<br>○ Մինչ ջրերի ընդունման կետը հասնելը կեղտաջրերի անհատական համակարգից եկող հոսքերը պետք է մաքրման ենթարկվեն, որպեսզի համապատասխանեն նվազագույն որակական չափանիշներին ըստ որակի ու մաքրման ազգային ուղենիշների<br>○ Իրականացվելու է կեղտաջրերի նոր համակարգերի (առաջ/հետո) մոնիթորինգ<br>○ Շինարարական մեքենաներն ու սարքավորումները կլվացվեն միայն հատուկ նախատեսված վայրերում, որտեղ այդ ջրերը չեն աղտոտի ջրային մակերևույթները |

| | | |
|---|---|---|
| Գ. Երթևեկության և հետիոտնային ապահովություն | Ուղղակի կամ անուղղակի վտանգներ հասարակական երթեւեկությանը եւ հետիոտներին շինարարական աշխատանքների հետեւանքով | ➢ Համաձայն ազգային կանոնակարգի, կապալառուն պետք է երաշխավորի, որ շինարարական տեղանքը պատշաճ կերպով անվտանգ է եւ երթեւկության հետ կապված շինարարարությունը կարգավորված է: Սա ներառում, բայց չի սահմանափակում<br>✓ Ցուցաայուները, զգուշացնող նշանները, ուղեփակերը եւ ճանապարհային շրջանցումները պետք է հստակ տեսանելի լինեն եւ հասարակությանը զգուշացվի բոլոր պոտենցիալ վտանգների մասին:<br>✓ Երթեւեկության կառավարում եւ աշխատակազմի վերապատրաստում, մասնավորապես տեղանքի հասանելիության եւ տեղանքին կից ծանր երթեւեկության համար: Ապահով անցումներ հետիոտների համար, ուր շինարարությունը խոչընդոտում է երթեւեկությանը:<br>✓ Աշխատանքային ժամերի կարգավորում երթեւեկության տեղական կաղապարներին, օրինակª խուսափելով տրանսպորտային հիմնական աշխատանքներից լարված ժամերին կամ անասունների գլխաքանակի շարժման ընթացքում:<br>✓ Երթեւեկության ակտիվ կառավարում տեղանքում վերապատրաստված աշխատակազմի կողմից, եթե անհրաժեշտ է հասարակության ապահով ու հարմար անցումների համար:<br>✓ Վերանորոգման ընթացքում ապահով ու շարունակական մուտք դեպի գրասենյակային հաստատությունները, խանութները ու բնակավայրերը, եթե կառույցները բաց են հասարակության համար: |

## ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՒԼԵՐՈՒՄ

### Շինարարություն փուլ

| Գործունեություն | Ինչ<br>(պարամետր է վերահսկվելու) | Որտեղ<br>(է պարամետրը վերահսկվելու) | Ինչպես<br>(է պարամետրը վերահսկվելու) | Երբ<br>(սահմանել հաճախականությունը/կամ շարունակականությունը) | Ինչու<br>(է պարամետրը վերահսկվելու) | Ով<br>(է պատասխանատու պարամետրի վերահսկման համար) |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Շինարարկական նյութերի մատակարարում | Շինարարական նյութերի գնումը արտոնագրված մատակարարներից | Մատակարարների գրասենյակներ և պահեստներ փոխառության վայրերի | Փաստաթղթերի ստուգում<br>Նյութերի որակի ստուգում | Նյութերի մատակարարման վերաբերյալ համաձայնագրերի ստորագրման ընթացքում | Ապահովել շինարարության տեխնիկական որակը<br>Պաշտպանել մարդկանց առողջությունը և միջավայրը | ՀՏԶՀ |
| 2.Շինարարական նյութերի և թափոնների տեղափոխում<br>Շինարարական սարքավորումների տեղաշարժ | Շինարարական տեխնիկայի և մեքենաների տեխնիկական վիճակը<br>Բեռնատար մեքենաների և բեռի համապատասխանություն, բաց մեքենաներով տեղափոխվող բեռի ծածկում<br>Շինարարական տրանսպորտային միջոցների և մեքենաների տեղափոխում սահմանված երթուղիներով | Շինարարական նյութերի և շինարարական թափոնների փոխադրման համար երթուղիներ | Շինարարական վայրին հարակից ճանապարհներում դիտազննում ներառյալ նախապես համաձայնեցված տեղափոխության երթուղիները | Չնախատեսված ստուգումներ աշխատանքային ժամերին | Խուսափել փոշուց և կոշտ թափոններից օդի և ճանապարհների աղտոտվածությունից<br>Նվազեցնել ճանապարհային խոչընդոտները | ՀՏԶՀ,<br>Վարդաձորի համայնքապետարան |
| 3.Շինարարական թափոնների կուտակում | Ֆորմալ ձևավորված աղբավայրերի ժամանակին մաքրում | Շինարարության վայր և հիմք (եթե կիրառելի է)<br>Աղբի տեղափոխության համար ձևավորված աղբավայրեր | Ստուգաթերթեր<br>Դիտազննում | Ընթացքում և աշխատանքային ժամերի | Խուսափել շրջակա միջավայրի աղտոտումից | ՀՏԶՀ, Վարդաձորի համայնքապետարան |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 4.Կենցաղային աղբի առաջացում | Աղբարկղերի ապահովում, թափոնների տեղադրումը տեղում:<br>Թափոնների կանոնավոր տեղափոխության շուրջ տեղական ինքնակառավարման մարմինների հետ համաձայնություն | Շինարարական հրապարակ | Դիտազննում | Շինարարության ամբողջ ժամանակահատվածում | Խուսափել կենցաղային աղբի պատճառով հողի եւ ջրի աղտոտվածությունից, | ՀՏԶՀ,<br>Վարդաձորի համայնքապետարան |
| 5.Աշխատանքի անվտանգություն | Աշխատողներին հատուկ համազգեստի և պաշտպանական միջոցների տրամադրումը և դրանց կիրառման պարտադրում կառուցապատողին<br>Շինարարական սարքավորումների օգտագործման և շահագործման կանոնների անվտանգության պահպանման միջոցառումների հետևում | Շինարարական հրապարակ | Գործունեության ստուգում | Շինարարության ամբողջ ժամանակահատվածում | Նվազեցնել պատահարների հավանականությունները | ՀՏԶՀ |
| 6.Բնակավայրում աշխատանքների իրականացնում | Աշխատանքային տարածքի սահմանազատում և ցանկապատում<br>Աշխատանքային տարածքից դուրս շինարարարական մեքենաների և տեխնիկայի կայանման արգելում , ինչը կխոչընդոտի երթևեկության և հետիոտնի ազատ տեղաշարժը<br>Արգելում շինարարական նյութերի և թափոնների թափում կամ ցրում շինարարական տարածքից դուրս | Շինարարական հրապարակ | Դիտարկում | Շինարարության ամբողջ ժամանակահատվածում | Նվազեցնել աշխատանքային տարածքի շրջակայքում շարժման խոչընդոտները և նվազեցնել պատահարների հավանականությունը | ՀՏԶՀ |

Շահագործման փուլ

| Գործունեություն | **Ինչ**<br>(պարամետր է վերահսկվելու) | **Որտեղ**<br>(է պարամետրը վերահսկվելու) | **Ինչպես**<br>(է պարամետրը վերահսկվելու) | **Երբ**<br>(սահմանել հաճախականությունը/կամ շարունակականությունը) | **Ինչու**<br>(է պարամետրը վերահսկվելու) | **Ով**<br>(է պատասխանատու պարամետրի վերահսկման համար) |
|---|---|---|---|---|---|---|
| Կենցաղային աղբի և մանկապարտեզի ժամանակավոր շինարարության ընթացքում առաջացած աղբի տեղափոխում | Մանկապարտեզում առաջացած կենցաղային թափոնների կանոնավոր հավաքում և տեղափոխում Վարդաձոր հայանքը սպասարկող աղբավայր | Մանկապարտեզի և հարակից տարածքում | Դիտազննում | Մանկապարտեզի շահագործման ամբողջ ընթացքում | Պահպանել լավ սանիտարական պայմաններ մանկապարտեզում<br><br>Կանխել միջավայրի աղտոտումը | ՀՏԶՀ, Համայնքապետարան |

## ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՔԱՐՏԵԶ ԵՎ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ







## ՀԱՎԵԼՎԱԾ 2: ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**Արձանագրություն**
**Հանրային քննարկում**
**Գեղարքունիքի մարզի Վարդաձոր համայնքում մանկապարտեզի կառուցման բնապահպանական և սոցիալական կառավարման պլանի վերաբերյալ**

Սույն թվականի մայիսի 10-ին Գեղարքունիքի մարզի Վարդաձոր համայքում տեղի ունեցավ շահագրգիռ կողմերի հանրային քննարկում՝ համայնքային կենտրոնի շինարարության Բնապահպանական և սոցիալական կառավարման պլանի (ԲՍԿՊ) վերաբերյալ:

Սույն թվականի մայիսի 4-ին ՀՏԶՀ պաշտոնական կայք էջում (www.atdf.am) հրապարակվել է հանդիպման վերաբերյալ հայտարարություն՝ հայերեն և անգլերեն լեզուներով՝ ներառյալ հանդիպման ամսաթիվը և ժամը: Հանդիպման մասին հայտարարությունը փակցվել է նախապես համայնքապետարանի հայտարարությունների տախտակին, ինչպես նաև համայնքապետարանի աշխատակիցների կողմից իրականացվել է հեռախոսային զանգեր՝ մասնակիցների ներկայությունը ապահովելու համար:

Հանրային քննարկումը իրականացվել է ՀՏԶՀ Բնապահպանական մասնագետ Ա. Օհպովայի, ՀՏԶՀ սոցիալական մասնագետ Ս. Մսրյանի կողմից:

Ա. Օհպովան ողջունեց ներկա գտնվողներին և ներկայացրեց քննարկման հիմնական նպատակը: Ա. Օհպովան ներկայացրեց ԲՍԿՊ-ն և ընդգծեց ծրագրի իրականացման հետ կապված հավանական բացասական բնապահպանական ազդեցությունները: Նա հիմնավորեց ԲՍԿՊ մշակելու անհրաժեշտությունը՝ նշելով, որ միկրոծրագիրը ենթադրում է նոր շենքի կառուցում: Այն ներառում է օդի աղտոտումը, շինարարական աղբի կուտակումները, աղբի տեղափոխությունը և համայնքի բնակիչների անվտանգությունը: Ա. Օհպովան բացատրեց թե ինչ միջոցառումներ է ՀՏԶՀ-ն կիրառելու մեղմացնելու հնարավոր բացասական ազդեցությունները՝ ներառյալ շինարարական աղբի տեղափոխումը: Նշվեց, որ ԲՍԿՊ-ն ծածկում է շինարարական աղբի և ավելորդ հողի տեղափոխության և հեռացման խնդիրը: Ա. Օհպովան նաև ներկայացրեց կեղտաջրերի հեռացման համակարգը՝ նշելով, որ կառուցվելու է կեղտաջրերի կուտակման հոր, որոնք պարբերաբար հեռացվելու են:

Քանի որ մանկապարտեզի տարածքը ցանկապատված չէ և տեղակայված է համայնքի կենտրոնում Ա. Օսիպովան խոսեց համայնքի անդամների և աշխատակիցների անվտանգության ապահովման միջոցառումների և շինարարության պատճառով համայնքային կյանքի խաթարման մասին: Ամսական կտրվածքով իրականացվելու է տեխնիկական վերահսկողություն երաշխավորելու, որ ԲՍԿՊ-ում ներառված բոլոր բնապահպանական մեղմացուցիչ միջոցառումները կատարված են և շեղումների մասին զեկուցվել է ՀՏԶՀ-ին:

Ս. Մսրյանը խոսեց ԲՍԿՊ-ի հիմնական սոցիալական ասպեկտների մասին:

Նա մատնանշեց, որ ծրագիրը չի ներառում տարաբնակեցում, քանի որ շինարարության համար առաջարկվող տարածքը հանրային սեփականություն է, բնակեցված չէ և չի օգտագործվում այն նպատակներով և համայնքապետարանը ունի հողի սեփականության վկայական տրամադրված կադաստրի կողմից:

Ս. Մսրյանը նաև խոսեց հիմնական սոցիալ-տնտեսական մարտահրավերների մասին՝ ներառյալ կանանց, երիտասարդների և խոցելի խմբերի ներառումը օգուտների բաշխմանը: Նա ընդգծեց, որ այս խմբերը պետք է ունենան հավասար հնարավորություններ ներգրավված լինելու ծրագրի օգուտների մեջ:

Ս. Մսրյանը բացատրեց նաև թե ինչպես է գործում բողոքների ներկայացման մեխանիզմը ՄՆՏԶ ծրագրի շրջանակներում: Համայնքային մակարդակում ընտրված բողոքների համակարգողը՝ Ավետիսյան Մաքսիմը ներկայացվեց համայնքի անդամներին: Ս. Մսրյանը բացատրեց համայնքայի մակարդակում բողոքների համակարգողների ընտրության նպատակը և ուղորդեց ծրագրի հետ կապված հարցերի և բողոքների առկայության դեպքում դիմել Մաքսիմին:

Ս. Մսրյանը Նա մատնանշեց, որ համայնքի անդամները հնարավորություն կունենան ուղիղ դիմել ՀՏԶՀ այն դեպքում, երբ չեն ցանկանա իրենց բողոքը հայտնել ԾԻԿ-ին կամ համայնքային մակարդակում բողոքների համակարգողին: Մսրյանը բացատրեց բողոքների ուղարկման բոլոր տարբերակները, այդ թվում էլ հասցեն, թեժ գծի հեռախոսահամարը, փոստային հասցեն և կայքի հասցեն՝ նշելով, որ ՀՏԶՀ կոնտակտային տվյալները նշված են ժողովի մասնակիցներին բաժանված բուկլետների, ինչպես նաև հանրային տեսանելի վայրում փակցված ցուցապաստառների վրա: Մսրյանը ներկայացրեց, որ հանրային վայրերում և շինհրապարակում տեղեկատվական վահանակների վրա պարբերաբար կփակցվեն ծրագրի ընթացի վերաբերյալ հայտարարություններ՝ երաշխավորելու, որ համայնքի

ներկայացուցիչները կարող են բարձրացնել իրենց ձայնը մտահոգություններ ունենալու դեպքում:

Մասնակիցները խրախուսվեցին բարձրացնել քննարկված հարցերի վերաբերյալ հարցեր: Հետևյալ հարցերը բարձրացվեցին մասնակիցների կողմից:

Համայնքի ղեկավար Ռոբերտ Սիրականյանը ներկայացրեց, որ համայնքը խստորեն կվերահսկի շինարարական աշխատանքները՝ շինարարության բարձր որակ ապահովելու համար: Շրջակա տարածքը կվերականգնվի և կցանկապատվի:

Կից ներկայացված է մասնակիցների ցանկը և լուսանկարները:

**Մասնակիցների ցանկ**



Լուսանկարներ հանրային քննարկումից





## ՀԱՎԵԼՎԱԾ 3: ՀՈՂԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

ՔԱՂՎԱԾՔ

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

2011Թ. ՄԱՐՏԻ 21-Ի ԹԻՎ 5 ՈՐՈՇՈՒՄԻՑ

***Վարդաձոր համայնքի մանկապարտեզի կառուցման համար հողատարածք հատկացնելու մասին***

Ելնելով խիստ անհրաժեշտությունից, ղեկավարվելով ՏԻՄ ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ կետի պահանջներով և նկատի ունենալով, որ նշված տարածքը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 10-րդ հոդվածի 5-րդ կետին, նախատեսված է հասարակական կառուցապատման համար.

**Համայնքի ավագանին որոշում է՝**

Համայնքի մշակույթի տան կից հողատարածքից 0.217 հա հատկացնել համայնքի մանկապարտեզի նոր շենքի կառուցման համար:

Վարդաձոր համայնքի ղեկավար՝ Ռ. Սիրականյան

12 հունիսի 2015թ.



ՎԿԱՅԱԿԱՆԸ ՏՐՎԱԾ Է ________ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
(սեփականության կամ օգտագործման)

(սեփականատիրոջ (օգտագործողի) անունը (անվանումը))

(անշարժ գույքի գտնվելու վայրը (հասցեն), անվանումը) 16/1

ՆԿԱՏՄԱՄԲ

(անշարժ գույքի նկատմամբ իրավունքը հաստատող փաստաթղթի անվանումը)

ՀԻՄԱՆ ՎՐԱ

ԳՐԱՆՑՎԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ, ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՏՅԱՆԻ 05-084 2-1 ՄԱՏՅԱՆԻ 197 ՀԱՄԱՐԻ ՏԱԿ:

ՍՈՒՅՆ ՎԿԱՅԱԿԱՆԸ ԿԱԶՄՎԱԾ Է ԵՐԿՈՒ ՕՐԻՆԱԿԻՑ. ՄԵԿԸ ՏՐՎՈՒՄ Է ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋԸ (ՕԳՏԱԳՈՐԾՈՂԻՆ), ՄՅՈՒՍԸ ՊԱՀՎՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ՂԵԿԱՎԱՐ

(ստորագրությունը)

03 20.. թ.

2825557



ՀՈՂԱՄԱՍԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ 05-084-031-014

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

ՀՈՂԱՄԱՍԻ ՉԱՓԸ (հա) 0,217 հա

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱԿԸ

ՇԵՆՔԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

ՄԱԿԵՐԵՍԸ (քառ. մ.)

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱԿԸ

ՇԻՆՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

| Հ/Հ | ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ | ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ | ՄԱԿԵՐԵՍԸ (քառ. մ.) | ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱԿԸ |
|---|---|---|---|---|
| 1 | 05-084-031-014-001 | [illegible] | 94.0 | [illegible] |
| 2 | —"— —"— 002 | [illegible] | 9.6 | —"— |
| 3 | —"— —"— 003 | [illegible] | 70.8 | —"— |

Լրացուցիչ նշումներ, փոփոխություններ

Կատարողներ՝ (ստորագրությունները)

## ՀԱՎԵԼՎԱԾ 4: ՇԻՆԱՐԱԿԱԿԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԵՆ (կտրամադրվի)

## ՀԱՎԵԼՎԱԾ 5: ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՂԲԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ



ՏԵՂԵԿԱՆՔ

«12» հունիսի 2015 թ.

Գեղարքունիքի մարզի (քաղաքի) Ճամբարակ համայնքի կողմից

ներկայացված [illegible] ծրագրի իրականացման
*ծրագրի անունը*

ընթացքում առաջացած շինարարական աղբը տեղափոխվելու է [illegible],
*աղբավայրի անունը*

որը գտնվում է շին.հրապարակից 1 կմ հեռավորության վրա:

Ճամբարակ համայնքի ղեկավար

[illegible]

*իրավասու կազմակերպության պաշտոնյա, անուն, ազգանուն*

Կ.Տ.